ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՄԱՍԻՆ», ««ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	**2.**	**3.**	**4.**	**5.**	**6.**
1	**ՀՀ կառավարություն**	«Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդված	1) Առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Գրասենյակի ղեկավարն ի պաշտոնե Ներկայացուցչի տեղակալն է:»: 2) Առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ներկայացուցչի պաշտոնը թափուր մնալու, ինչպես նաև Ներկայացուցչի	Հաշվի առնելով, որ Գրասենյակի ղեկավարի տեղակալի պաշտոնը քաղաքացիական ծառայության պաշտոն է, նպատակահարմար չէ այն հավասարեցնել քննարկվող օրենքի նախագծով առաջարկվող վարչական պաշտոններին:	Ընդունվել է:

			բացակայության կամ կոնկրետ գործով շահերի բախման դեպքերում նրան փոխարինում է Գրասենյակի ղեկավարը:»:		
2	**ՀՀ կառավարություն**	«Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «իրավական» բառը:	Եզրույթի օգտագործումը նպատակահարմար չէ:	**Ընդունվել է:**
3	**ՀՀ կառավարություն**	«Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի մասին» օրենքի նախագծի 15-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 15-րդ հոդվածի 4-րդ մասը հանել:	4-րդ մասի անհրաժեշտությունը բացակայում է:	**Ընդունվել է:**
4	**ՀՀ**	««Պետական	Առաջարկվում է նախագծի 1-ին	Առաջարկվող	**Ընդունվել է:**

	կառավարություն	պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները. «Հատուկ հանձնարարություններով դեսպան» բառերը փոխարինել « Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար» բառերով, «Տեսչական մարմինների գրասենյակի ղեկավար» բառերը փոխարինել « Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ղեկավար» բառերով	փոփոխությունը պայմանավորված է Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի և նրա գրասենյակի վերաբերյալ դրույթների ուժի մեջ մտնելով:	
5	**ՀՀ կառավարություն**	««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի «25» թիվը փոխարինել «26» թվով:	Տե՛ս նախորդ մեկնաբանությունը:	**Ընդունվել է:**